



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՅԱՆՔՆԵՐՈՒ ԱՐԵՄՍԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՅԱՆԱՅԻ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԾՈՒՄ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՒՅՑ ՄԷՋ

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, Կիրակի, 31 Յուլիսը, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Այլակերպութեան տօնն է: Այս Կիրակի մեր Թեմին համար յիշատակելի ու նշանակալից օր մըն է, որովհետեւ հոգեւորականաց դասը պիտի հարստանայ նոր քահանայով մը:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Կլենտլի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագ պիտի մատուցէ եւ քահանայական ձեռնադրութիւն եւ օծում պիտի շնորհէ բարեշնորհ Նազարէթ Սրկ. Քիրազեանին:

Ս. Խորանին պիտի սպասարկեն եւ խարտաւիլակութիւնը պիտի կատարեն Գերպ. Ս. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան եւ Արժ. Ս. Արտակ Քիւյ. Տեմիրճեան: Առաջնորդ Սրբազանը այս առիթով նաեւ պիտի ուղղէ յաւուր պատշաճի պատգամ մը:

Կնքահայրութիւնը ստանձնած են Տէր եւ Տիկին Տոքթ. Յովաննէս եւ Մարինա Տէր Չաքարեաններ: Ձեռնադրեալ տէր հայրը պիտի ծառայէ Քրեսենթա Հովիտի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ ծխական համայնքին իբրեւ հոգեւոր հովիւ, որուն դպրաց դասը կը ղեկավարէր վերջին տարիներուն:

Ս. Պատարագէն ետք, ի պատիւ ձեռնադրեալ քահանայ հօր, Ազգային Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ տեղի պիտի ունենայ ճաշկերոյթ մը, կազմակերպութեամբ Քրեսենթա Հովիտի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ հոգաբարձութեան: Ձեռնարկը կը վայելէ Առաջնորդ Սրբազան Հօր նախագահութիւնը: Հիւրընկալութիւնը ստանձնած է Տոքթ. Ալպէրթ Գարամանուկեան:

Ուրբաթ, 29 Յուլիսի երեկոյեան, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, Առաջնորդ Սրբազան Հայրը բարեշնորհ Նազարէթ Սրկ. Քիրազեանին քահանայական կոչման արարողութիւնը պիտի կատարէ:

Նշենք որ այս առիթով, Քրեսենթա Հովիտի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ մէջ (Ազգ. Առաջնորդարան) Ս. Պատարագ պիտի չի մատուցուի բացառաբար:

EPISCOPAL DIVINE LITURGY AND ORDINATION OF A PRIEST AT ST. MARY'S CHURCH

Sunday, July 31st, 2011, is the Feast of the Transfiguration of our Lord Jesus Christ.

On this day, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy at St. Mary's Church in Glendale and will ordain Deacon Nazareth Kirazian into the priesthood. Very Rev. Fr. Muron Aznikian and Rev. Fr. Ardak Demirjian will assist at the altar.

Deacon Nazareth Kirazian has served as choir director at the Crescenta Valley Parish for the past few years and will be the Pastor of the Parish upon his ordination. His ordination Godfather is Mr. and Mrs. Hovhannes and Marina Der Zakarian.

In the afternoon, a luncheon organized by the Crescenta Valley Parish Board of Trustees will be held at the Prelacy "Dikran and Zarouhie Der Ghzarian" Hall in honor of the newly ordained priest. The luncheon is being held under the auspices of the Prelate and is hosted by Dr. Alber Karamanoukian.

On the evening of Friday, July 29th, the Prelate will conduct the service of the calling into the priesthood at St. Mary's Church.

Note: Divine Liturgy will not be celebrated at the Crescenta Valley Parish (at the Prelacy) on Sunday, July 31, due to this special occasion.

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՍԱՐԿԱՄԱԳԱՅ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԵՐՈՅԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԵՋ



Կիրակի, 24 Յուլիսին,
Սան Ֆրանսիսքոյի Ս.
Գրիգոր Լուսաւորիչ
Եկեղեցւոյ մէջ
Եպիսկոպոսական
հանդիսաւոր Ս. Պատարագ
մատուցուեցաւ:
Յրաւերովը եկեղեցւոյ
հոգեւոր հովիւ Արժ. Տ.
Խորէն Ա. Զինյ. Յապէշեանի
եւ Յոգաբարձութեան,
Թեմիս բարեխնամ
Առաջնորդ Բարձր. Տ.
Մուշեղ Արք. Մարտիրոսեան
Ս. Պատարագ մատուցեց,

սարկաւազաց ձեռնադրութիւն կատարեց եւ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամը փոխանցեց ներկայ հաւատացեալներուն:

Սարկաւազ ձեռնադրուեցան տիրացուներ Յովհաննէս Պալեան եւ Յովհաննէս Մխիթարեան:

Իր պատգամին մէջ, Առաջնորդ Սրբազանը անդրադարձաւ սարկաւազական ձեռնադրութեան ու ըսաւ. «Եկեղեցւոյ ծառայողներու ձեռնադրութիւնը ուրախալի առիթ է եւ վկայութիւն, որ մեր հաւատքն ու ազգային ժառանգութիւնները պիտի պահպանուին ու զարգանան: Ձեռնադրութեան պահուն, ծնրադիր դպիրները ուխտ ըրին Աստուածային շնորհներու հետեւողութեամբ ապրիլ ու դառնալ խաղաղութեան ակտաբերներ, ի փառս ամենասուրբ Երրորդութեան: Մենք խնդրեցինք Աստուծմէ, որ իր աներելոյթ Ս. Աջը դնէ անոնց վրայ, մաքրէ զանոնք, շնորհէ ուժ եւ Իր Միածինին ու Սուրբ Հոգիի առաքիլութիւններով տոգորէ անոնց հոգիները, օրհնէ ու արժանի ընէ Իր սուրբ երկեղեցւոյ ծառայութեան: Կը խնդրենք Ամենակալէն, որ Իր շնորհներով ու իմաստութեամբ օժտէ զանոնք, ներշնչում պարգեւէ եւ զօրացնէ ծառայական առաքելութեան մէջ: Վերջապէս, կ'աղօթենք, որ Աստուած ընդունի մեր ու Իր ընտրեալ ծառաներուն խնդրանքները, ընդմիշտ ըլլայ անոնց օգնական եւ պահապան, զանոնք խաղաղութեան մէջ ապահով պահէ՝ Իր ամենազօր Ս. Աջին եւ Ս. Խաչի հովանիին ներքեւ»:



Առաջնորդ Սրբազանը նաեւ անդրադարձաւ Վեհափառ Հայրապետի յառաջիկայ Հովուապետական այցելութեան: Ան նշեց, որ Նորին Ս. Օծութիւնը յառաջիկայ Հոկտեմբերին մեր Թեմը պիտի պատուէ Հովուապետական շնորհաբեր այցելութեամբ մը. այդ օրերուն, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին պիտի տօնէ իր հիմնադրութեան 45ամեակը: «Վստահ եմ որ,

ըսաւ Առաջնորդ Սրբազանը, դուք՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ ծխական համայնքի հաւատարիմ զաւակներդ, քանի մը ամիս ետք խանդավառութեամբ պիտի դիմաւորէք ու հիւրընկալէք Վեհափառ Հայրապետը, որ այս համայնքին հետ պիտի ապրի յիշատակելի պահեր ու Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ տարեգրութեանց մէջ պիտի արձանագրուի պատմական հանգրուան մը»:

Պատարագի աւարտին, այս առիթով ընդունելութիւն մը տեղի ունեցաւ եկեղեցւոյ կից «Վասպուրական» սրահին մէջ որուն ներկայ եղաւ Առաջնորդ Սրբազանը: Աւելի ուշ, ան հանդիպում ունեցաւ Հոգաբարձութեան, երեսփոխաններու եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ

Հայրապետի Սան Ֆրանսիսքո այցելութեան հիւրընկալ յանձնախումբին հետ:

PRELATE ORDAINS DEACONS AT ST. GREGORY CHURCH IN SAN FRANCISCO

By the invitation of Archpriest Fr. Khoren Habeshian, Pastor, and the Board of Trustees of St. Gregory Church of San Francisco, on Sunday, July 24th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy and delivered the sermon at St. Gregory Church.



During the service the Prelate ordained two deacons, Hovannes Balian and Hovannes Mekhitarianian.

The Prelate reflected on the ordinations at the start of his sermon saying, "The ordination of church servants is a truly joyous occasion, for it is an assurance that our faith and our religious and national heritage will be upheld and promoted. During the solemn ceremony, as the two acolytes were

bestowed with the rank of deaconate, on bent knees they were presented to the Lord, pledging to abandon the earthly values and be a preacher of the gospel of peace, for the glory of the Holy Trinity. We prayed for Almighty God to cast His invisible hand over them, to cleanse and purify them, fill them with strength and with the benevolence of His only begotten Son and the Holy Spirit, and bless them to be worthy to enter into the service of His holy church. We beseeched Almighty God to bestow His grace and wisdom upon them, and to inspire and embolden them in their service and duties. And now, we pray for our benevolent God to receive our supplications and those of His servants whom He has chosen for the service of His church, to be their helper and protector every hour, keeping them safe and in peace under the shadow of His almighty arm and venerable cross."

The Prelate also reminded the faithful that in October H.H. Catholicos Aram I will be honoring the Western Prelacy with a Pontifical Visit and that His Holiness will be with St. Gregory Church to celebrate their 45th anniversary. On this occasion the Prelate stated, "I am certain that you, the faithful parishioners of St. Gregory Church, will enthusiastically welcome His Holiness in just a few short months, and that his time with this community will be among the most memorable in the history of St. Gregory Church."

At the conclusion of the service, a reception was held at the adjacent "Vasbouragan" Hall on the occasion of the Prelate's visit.

Later in the day, the Prelate met with the Pastor, Board of Trustees, Delegates, and the local Pontifical Visit committee to discuss preparations for the upcoming visit.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՑԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆԵՑ ՆՈՐՎԵԿԻՈՅ ԶԻՊԱՏՈՍԻՆ

Նորվեկիոյ մէջ անցեալ շաբաթավերջին տեղի ունեցած ահաբեկչական զոյգ արարքներուն առիթով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս իր ուղղած նամակով Նորվեկիոյ Լուտերական ազգային եկեղեցւոյ պետին, իստօրէն դատապարտեց կատարուած արարքները: Ան նաեւ դատապարտումի ու զօրակցութեան նամակ մը յղեց եկեղեցիներու Զամաշխարհային Խորհուրդի Ընդհանուր Բարտուղարին, որ ազգութեամբ Նորվեկիացի է:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Զայրը Երեքշաբթի, 26 Յուլիսին, ցաւակցական ու կարեկցանքի նամակ մը յղեց Լոս Անճելըսի մօտ Նորվեկիոյ Զիւպատոս Մայքըլ Սորոյի:

Ինչպէս ծանօթ է, Ուրբաթ, 22 Յուլիսին, ոմբային ոճիր մը արձանագրուեցաւ Նորվեկիոյ մայրաքաղաքին՝ Օսլօ կառավարական շէնքին մէջ, ապա ժամ մը յետոյ Նորվեկիացի երիտասարդ մը ահաւոր ջարդի ենթարկեց Օսլոյէն քիչ անդին գտնուող կղզեակին մէջ գումարուող երիտասարդական համագումարին մասնակիցները: Արձանագրուեցան 77 զոհ եւ բազմաթիւ վիրաւորներ:

Նամակին մէջ, Առաջնորդ Սրբազանը, յանուն Թեմիս հոգեւորականաց դատուն, ժողովականութեան ու հաւատացեալ ժողովուրդին, ցաւ կը յայտնէ այս ոճրային արարքին համար, կը ցաւակցի զոհերուն ընտանիքներուն ու կը մաղթէ եւ կ'աղօթէ, որ վիրաւորները շուտափոյթ ապաքինում գտնեն:

PRELATE EXPRESSES CONDOLENCES TO THE CONSUL OF NORWAY

Following the horrific bombing and shootings in Norway on Friday, July 22nd, which claimed 77 lives, H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, condemned the attacks and sent a letter of condolence to the Archbishop of the Church of Norway. His Holiness also sent a letter of condolence to the General Secretary of the World Council of Churches (WCC) Dr. Olav Fykes Tweit, who is Norwegian, emphasizing the important role of the WCC in providing the space for youth to practice tolerance and respect.

On Tuesday, July 26th the Prelate sent a letter of condolence to the Honorary Consul of Norway in Los Angeles Michael Soroy.

"We were deeply moved by the tragic and senseless loss of life, and on behalf of our Clergy, parishioners, and greater community, we extend our condolences to you and the citizens of Norway. Our thoughts and prayers are with you and the victims' families during this sorrowful time. We pray to Almighty God to grant peace to the souls of the deceased, to hasten the healing of the wounded, to comfort families who are coping with the loss of their loved ones, and to restore tranquility to your nation", read the Prelate's letter.

Ս. ԽԱՀ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Նախաձեռնությամբ Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի հովիւներուն եւ հոգաբաժնութեան, այսօր, Կիրակի, 31 Յուլիսին պիտի սկսի երիտասարդաց խմբակի ամառնային ճամբարը, «Camp Shining Light» բանակումը, որ տեղի պիտի ունենայ Angelus Oaks շրջանի բանակավայրին մէջ:

Մէկ շաբթուան վրայ երկարող երիտասարդական այս բանակումին մասնակցող պատանիները պիտի հետեւին կրօնա-դաստիարակչական ծրագիրներու եւ արտա-դասարանային աշխատանքներու՝ մասնակցութեամբ եկեղեցւոյ հոգեւոր հովիւներուն եւ երիտասարդացի պատասխանատուներուն:

CAMP SHINING LIGHT

Since 1984, a weeklong religious and educational summer camp for youth called "Camp Shining Light" has been taking place by the initiative of the Pastors and Board of Trustees of Holy Cross Cathedral in Montebello.

Participants will head to Angelus Oaks on Sunday, July 31st, where throughout the week, they will follow lectures, Bible readings and meditations, led by the Parish Pastors and Camp Directors, and also participate in various activities including sports and arts and crafts.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ԶԱՅԿԱԿԱՆ ՈՐԿՐԱԾՈՒԾԻ ԶԻՄՆԱԴՐԱՄԻ ՏԱՐԵԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ

Կիրակի, երեկոյեան ժամը 6-ին, Կլենտէյլ Hilton պանդոկին մէջ, տեղի պիտի ունենայ Զայկական Ոսկրածուծի Զիմնադրամի տարեկան ճաշկերոյթը:

Գնահատանքի պիտի արժանանան այս հաստատութեան նուիրեալ ծառայողներ:

Առաջնորդ Սրբազանը ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ իր քաջալերանքի խօսքն ու օրհնութիւնները: Առաջնորդ Սրբազան Զօր պիտի ընկերանայ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Կոմիտաս Քհնյ. Թորոսեան:

PRELATE TO ATTEND ARMENIAN BONE MARROW DONOR REGISTRY “MATCH FOR LIFE” GALA

On Sunday, July 31st, the annual gala of the Armenian Bone Marrow Donor Registry will be held at the Glendale Hilton.

The Prelate will deliver the invocation and his blessings. He will be accompanied by Rev. Fr. Gomidas Torossian.
